

1.2.3. Շինարարություն

**Բնակարանային շինարարություն:** 2001թ. հունվար-ապրիլին հանրապետությունում բնակչության, սեփականաշնորհումից ստացված և մարդասիրական օգնության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 41036 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 89 բնակելի շենք կամ 2000թ. հունվար-ապրիլին գործարկված մակերեսի 179,6%-ը: Մասնավորապես.

♦ **բնակչության միջոցների** հաշվին շահագործման է հանձնվել 18820 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 66 նոր բնակելի շենք, որոնցից համապատասխանաբար. Աշտարակի տարածաշրջանում՝ 2705 և 13, Արարատի՝ 700 և 5, Արտաշատի՝ 108 և 1, Մասիսի՝ 820 և 7, Արմավիրի՝ 552 և 3, Կոտայքի՝ 480 և 4, Նաիրիի՝ 180 և 3, Արթիկի՝ 1083 և 6, ք.Գյումրիում՝ 204 և 1, ք.Վանաձորում՝ 1212 և 4, ք.Երևանում՝ 10776 քառ.մ և 19 բնակելի շենք:

♦ **սեփականաշնորհումից ստացված միջոցների** հաշվին ամրացվել է ք. Գյումրիում 3710 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով մեկ բնակելի շենք:

♦ **մարդասիրական օգնության միջոցների** հաշվին շահագործման է հանձնվել 18506 քառ. մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 22 նոր բնակելի շենք, դրանից.

-**ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի** միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 3912 քառ. մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 2 բնակելի շենք, որոնցից Սևանի տարածաշրջանում՝ 2900 քառ. մ և Արմավիրի տարածաշրջանում՝ 1012 քառ. մ:

-**Ամերիկյան Կարմիր խաչի միջոցների** հաշվին շահագործման է հանձնվել ք. Գյումրիում 14045 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 7 բնակելի շենք:

-**Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի** միջոցների հաշվին շահագործման է հանձնվել Վաղարշապատի տարածաշրջանում 549 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 13 բնակելի շենք:

**Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերը**

	2000թ.			2001թ.		
	ընդհանուր (օգտակար) մակերեսը քառ. մետր	տոկոսներով		ընդհանուր (օգտակար) մակերեսը քառ. մետր	տոկոսներով	
		նախորդ տարվա նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	3632	61,6	5,8	3834	105,6	4,2
Փետրվար	3523	51,1	97,0	12063	3,4անգամ	3,1անգամ
Մարտ	7010	86,5	199,0	18240	2,6անգամ	151,2
<b>Ը նոստայակ</b>	<b>14165</b>	<b>69,0</b>	<b>15,2</b>	<b>34137</b>	<b>2,4անգամ</b>	<b>28,9</b>
Ապրիլ	8681	62,9	123,8	6899	79,5	37,8

2001թ. ապրիլին շահագործման հանձնված բնակելի շենքերի 77,4%-ը շահագործվել է բնակչության միջոցների հաշվին, համապատասխանաբար 2000թ.՝ 79,5%-ը:

**Իրականացված կապիտալ շինարարության ծավալը:** 2001թ. հունվար-ապրիլին հանրապետությունում իրականացվել է 12974,1 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 6928.5 մլն. դրամի: Իրականացված կապիտալ շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 10352,8 մլն.դրամ, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 4408,4 մլն. դրամ:

**Իրականացված կապիտալ շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2001թ. հունվար-ապրիլին**

Ֆինանսավորման աղբյուրներ	Իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն.դրամ (փաստացի գներով)		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով		2001թ. հունվար-ապրիլը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ, տոկոսներով (համադրելի գներով)	
	ընդամենը	այդ թվում՝ շինմունտա-ժային աշխատանքներ	իրականացվել է կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմունտա-ժային աշխատանքներ	իրականացվել է կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմունտա-ժային աշխատանքներ
<b>Ընդամենը</b>	<b>12974,1</b>	<b>10352,8</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>117,5</b>	<b>106,1</b>
<i>այդ թվում՝ ի հաշիվ՝</i>						
պետական բյուջեի	142,0	91,0	1,1	0,9	11,0	7,8
սեփականաշնորհումից ստացված միջոցների	513,6	481,0	4,0	4,7	-	-
համայնքների միջոցների	56,8	56,8	0,4	0,6	178,7	178,1
Ջարգացման և Վերակառուցման եվրոպական բանկի վարկի	145,3	75,3	1,1	0,7	120,3	83,6
Համաշխարհային բանկի վարկի	2012,1	426,0	15,5	4,1	112,5	27,6
Համաշխարհային բանկի գրանտի միջոցների	27,8	-	0,2	-	79,8	-
մարդասիրական օգնության միջոցների	1307,1	1265,2	10,1	12,2	3,9անգամ	3,9անգամ
<i>դրանից</i>						
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	1,7	1,7	0,0	0,0	21,8	21,8
ՄԱԿ-ի միջոցների	160,5	160,5	1,2	1,5	164,4	165,4
Ամերիկյան Կարմիր խաչի միջոցների	120,6	120,6	0,9	1,2	97,4	102,2
փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների	100,2	100,2	0,8	1,0	168,0	167,5
հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	915,1	873,2	7,1	8,4	-	-
այլ մարդասիրական օգնության միջոցների	9,0	9,0	0,1	0,1	18,8	19,6
օտարերկրյա ներդրողների միջոցների	509,4	509,4	3,9	4,9	122,0	3,1 անգամ
կազմակերպությունների միջոցների	4267,4	3545,5	32,9	34,2	110,5	105,4
բնակչության միջոցների	3992,6	3902,6	30,8	37,7	127,0	127,3

**Իրականացված կապիտալ շինարարության ծավալի աճի տեմպերը**

	2000թ.			2001թ.		
	իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն.դրամ (փաստացի գներով)	տոկոսներով		իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն.դրամ (փաստացի գներով)	տոկոսներով	
		նախորդ տարվա նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	1136,8	56,5	7,4	1697,1	147,2	7,6
Փետրվար	2989,7	103,5	263,0	3139,9	103,6	185,0
Մարտ	4174,5	131,7	138,2	3871,1	92,4	123,3
<b>1 եռամսյակ</b>	<b>8301,0</b>	<b>102,9</b>	<b>30,2</b>	<b>8708,1</b>	<b>103,9</b>	<b>21,3</b>
Ապրիլ	2642,1	57,3	63,3	4266,0	160,8	110,2

2001թ. ապրիլին իրականացվել է 4266,0 մլն. դրամի կապիտալ շինարարություն, որը

2000թ. համեմատությամբ ավել է 60,8%-ով, հունվար-ապրիլին համապատասխանաբար՝ 12974,1 մլն. դրամ և 17,5%-ով:

**Շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի, 2001թ. հունվար-ապրիլին**

(վիաստացի գներով, մլն. դրամ)

	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով	
	ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
<b>Ընդամենը</b>	<b>12974,1</b>	<b>10352,8</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>այդ թվում՝</i>				
արդյունաբերություն	1309,8	1035,5	10,1	10,0
գյուղատնտեսություն	2000,5	369,5	15,4	3,6
տրանսպորտ և կապ	3112,0	2562,3	24,0	24,7
առևտուր	506,2	441,1	3,9	4,3
բնակարանային տնտեսություն	3134,1	3127,8	24,1	30,2
կոմունալ տնտեսություն	422,6	422,6	3,3	4,1
առողջապահություն	8,2	8,2	0,1	0,1
կրթություն	268,1	241,5	2,1	2,3
մշակույթ	1,8	1,8	0,0	0,0
տնտեսության այլ ճյուղեր	2210,8	2142,5	17,0	20,7

**Վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ:** 2001թ. հունվար-ապրիլ ամիսներին հանրապետությունում վերանորոգվել է 3876 աշակերտական տեղով 7 հանրակրթական դպրոց:

*Արմավիրի մարզպետարանի* կողմից *սեփականաշնորհումից ստացված միջոցների* հաշվին վերանորոգվել է 3030 աշակերտական տեղով 4 հանրակրթական դպրոց:

*Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի* միջոցների հաշվին վերանորոգվել է 846 աշակերտական տեղով 3 հանրակրթական դպրոց, *Արարատի մարզում՝* 806 աշակերտական տեղով 2 հանրակրթական դպրոց, *Գեղարքունիքի մարզում՝* 40 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց:

**Շինարարությունն աղետի գոտում**

**Բնակարանային շինարարություն:** 2001թ. հունվար-ապրիլին *երկրաշարժից տուժած* քաղաքներում և գյուղական վայրերում բնակչության, սեփականաշնորհումից ստացված և մարդասիրական օգնության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 20254 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 19 բնակելի շենքեր կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 49,4 %-ը:

**Իրականացված կապիտալ շինարարության ծավալը:** Հանրապետության աղետի գոտում 2001թ. հունվար-ապրիլին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման համար ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 1235,5 մլն.դրամի կապիտալ շինարարություն կամ հանրապետությունում կատարված շինարարության ընդհանուր ծավալի 9,5%-ը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 542,3 մլն. դրամ (7,8%):

**Հանրապետության աղետի գոտում իրականացված կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2001թ. հունվար-ապրիլին**

(վիաստացի գներով, մլն. դրամ)

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով	
	ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
<b>Ընդամենը</b>	<b>1235,5</b>	<b>1195,6</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>այդ թվում՝ ի հաշիվ՝</i>				
պետական բյուջեի	12,2	12,2	1,0	1,0
սեփականաշնորհումից ստացված միջոցների	327,5	296,4	26,5	24,8
համայնքերի միջոցների	0,2	0,2	0,0	0,0
Համաշխարհային բանկի վարկի	8,9	8,9	0,7	0,7
մարդասիրական օգնության միջոցների <i>դրանից</i>	166,2	164,9	13,5	13,8
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	1,7	1,7	0,1	0,1
ՄԱԿ-ի միջոցների	3,4	3,4	0,3	0,3
Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցների	120,6	120,6	9,8	10,1
փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների	9,6	9,6	0,8	0,8
Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	26,7	25,4	2,2	2,1
այլ մարդասիրական օգնության միջոցների	4,2	4,2	0,3	0,4
կազմակերպությունների միջոցների	400,6	393,1	32,4	32,9
բնակչության միջոցների	319,9	319,9	25,9	26,8